«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ

իրավաբան Գևորգ Հայրապետյանին

Ի պատասխան Ձեր՝ 17.10.2014թ. 224-ի 2 հարցման՝ տեղեկացնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության Մելիք-Ադամյան 1 հասցեում գտնվող վարչական շենքի վերանորոգումը նախաձեռնվել է 2014թ օգոստոսին: 2014 թվականի ընթացքում վարչական շենքի վերանորոգման այլ աշխատանքներ չեն իրականացվել: Մինչ այդ՝ նախքան ֆինանսների նախարարության և ՊԵԿ-ի վերամիավորումը՝ 2013-ի ընթացքում կատարվել են ընթացիկ նորոգման աշխատանքներ առաջին և երկրորդ հարկերի միջանցքներում (միայն պատերը և առաստաղը): 1947-ին կառուցված շենքում ներկայում ընթանում են հատակի ամրացման և նոր մանրահատակների կառուցման, նոր դռների տեղադրման և վերանորոգման աշխատանքներ: Անհրաժեշտություն է առաջացել փոխել փայտյա միջնորմների վրա մոնտաժված էլեկտրասնուցման գծերը, ամբողջովին փոխել ջեռուցման համակարգը, շենքում ներդնել տեղեկատվական տեխնոլոգիաների արդի համակարգ: Սկսված վերանորոգման աշխատանքները նախատեսվում է իրականացնել ամբողջ շենքի տարածքում, իսկ վերանորոգվող ընդհանուր մակերեսը կազմում է 5 հազար 560քմ: Վարչական շենքի վերանորոգման համար, որը նախատեսվում է ավարտել 2014 թվականի դեկտեմբերին, 15.10.2014թ. դրությամբ կատարված աշխատանքների դիմաց արդեն իսկ վճարվել է 126մլն դրամ:

ՀՀ ՖՆ տեղեկատվության և

հասարակայնության հետ կապերի բաժին